

ԱՐԴՅՈՒՆԱՎՈՐ

ԽՈՐԴԱՐՈՒՄԱՆ ՊԱՏԳԱՄԸ

«Պար» է նորագոյի ընտիր Տեղակ մեր
Յիսուսի Քրիստոսի»

1984 ապրուան 366 օրերը հասան իրենց լրումին: Այօօր, մարդկութիւնը կնայած է նոր տարուան սեմին: Ամսոնորի առթիւ մարդիկ իրար չնորմաւորութեան քարտեր են ուղարկում, հեռագիրներ՝ եթէ հեռու են միմիանցից, իսկ եթէ մօտ են՝ այցելութիւններ են կատարում, բարեմաղթութիւններ փոխանակում ի նշան յարգանքի և բարեկամութեան: Առևտարական հաստատութիւնները իրենց տարեկան հաշիւններն են փակում և նոր հաշուեսեարեր բացում:

Չմոռնանք, սիրելի հաւատացեալներ, որ եկեղեցին ևս ունի իւր նոր տարիին՝ Ծննդեան և Աստուածայայանութեան մեծ տօնը, որից սկսում է և միւս տօնների կարգաւորութիւնը: Իրբե հոգեսոր հայր, սրասագինս շնորհաւորում եմ երկու տարիներն էլ և Աստուածոյ օրհնութիւնը՝ հայցում ամենքի վերացում:

Այս զոյտ առիթներից օգտուելով, կը կամենայի խօսել նաև Ս. Ծննդեան տօնի մասին:

Մարդկային սովորական հասկացողութեամբ, երկինքն ու երկիրը իրարմէ հեռու և տարերը գոյացութիւններ են, երկինքը՝ վեր, ուր Աստուածութեան առթուն ենք երեակայում, իսկ երկիրը՝ ներքե, ուր մեղաւոր մարդիկ են բնակում, հեռու միմիանց անհուն տարածութեամբ: Սակայն Փրկչի ծննդեամբ, ինչպէս նաև հասագային Անոր գործունէութեամբ ու Աւետարանին քարոզութեամբ, այդ հեռաւորութիւնը ջնջում է,՝ որովհետեւ Աստուածոյ ներկայութիւնը միայն երկնումը չէ, այլև երկրի վերայ, առաւել ևս մեր սրաերի և հոգիների մէջ, Այս է ահա քրիստոնէութեան բերած ամենամեծ բարիքն ու նորութիւնը: «Արքայութիւնն Աստուածոյ ի ներքս ի ձեզ է»:

Մեր բոլորիս երջանկութիւնը, երկրաւոր և յաւրահենակուն բովանդակուաթեամբ, մեր ներքին աշխարհի մէջն էր ի զուր կը լինի Բնիթղենէմի մէջ պատահած ծնունդը Փրկչին, եթէ նա չծնի նաև մեր սրաերի և հոգիների մէջ և իր անձով, կհանգով ու քարոզչութեամբ իրանց զեկավարն ու առաջնորդը չդառնայու ձիշդ այս մտքով է, որ առաքեալն էլ կորընաթացիներին զրում է: ԱՌ' չ գիտէք, եթէ տաճար էք Աստուածոյ և հոգի Աստուածոյ բնակեալ է ի ձեզ (Ա: Կորն., Գ: 16):

Նոյն մտքով բայց տարբեր ձեւակերձ պութեամբ է բացատրում Աթանատ Հայք բավետ մարդեղութեան մեծ ինորհուրդը՝ Աստուած մարմնացաւ, սրպէսովի մարդը աստուածանայ, այսինքն դէպի Աստուած բարձրանայաց: Փրկչի ծննդեամբ, գծուեցաւ ու պարզուեցաւ աստուածանուլու, այսինքն՝ Աստուածոն նմանելու ճանապարհը: Եթեսու իր լիրան քարոզի մէջ պատուիրում է լինել կատարեալ, ինչպէս երկնաւոր Հայրը (Մրկ. Ե: 48):

Աստուածոյ հայրութեան գաղափարով մարդիկ գառնում են եղբարյներ, որով միայն կարելի է խաղաղութիւն հաստատել երկրի վերայ: Ուր մարդկային եսն է իշխում, ասելութիւն կայ, զէն ու կարւ Այստեղ ո՛չ Աստուած կայ և ոչ էլ խաղաղութիւն: Այս միտքը պատկերաւոր կերպով յայնուած է Եղիսա մարգարէի պատմութեան մէջ: Աստուած չի երեւում նրան փոթորկների և ամպրոպների մէջ, այլ քաջցր զիփեւոի և կատարեալ խաղաղութեան մէջ:

Վերջացնելով մեր խօսքը, յորք ռում ենք ձեզ հանդուրժան լինել փոխադարձար իրարու հանդէպ և փոքր ինչ զուսպ և բարեացակամ վերաբերմունք ունենալ:

Նոր Տարուայ և Ս. Ծննդեան բարեարաստիկ առների առթիւ, սրտադինս աշօթում ենք որ նորոգուին նաև մեր սրտերն ու հոգիները, և երեշտակներէն աւետած խաղաղութիւնն ու հաճութիւնը հաստատուին համայն աշխարհի վերայ:

ՈՈՒԲԷՆ ՎՐԴ. ՑՈՎԱԿԻՄԵԱՆ
14 Յունուար 1985